ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՖԻՆԱՆՍԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ք. Չարենցավան **27.06.2023 թ.**

Չարենցավան համայնքի ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը անցկացրեց հերթական նիստը, որին ներկա են ավագանու անդամներ Նորայր Վարդանյանը,Արայիկ Բաբայանը , Մնացական Պողոսյանը ,Արթուր Գալստյանը, Անահիտ Խեչոյանը և Նորիկ Վարդանյանը:Նիստին ներկա չէ հանձնաժողովի անդամ Կ.Դավթյանը: Նիստին ներկա են նաև համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս. Վարդանյանը, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական եվ գնումների կազմակերպման բաժնի պետ Գայանե Աֆյանը , համայնքապետարանի աուդիտի պետ Ս Հովհաննիսյանը:

Օրակարգում՝

1. **Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 79-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:**
2. **Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:**

Լսեցին՝

1. Ա.Բալբաբյանը ներկայացրեց օրակարգի 1-ին հարցը՝ մանրամասնելով բոլոր առաջարկները : Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների իրականացման համար համայնքը պատրաստ է հատկացնել գումար:

Արթուր Գալստյանը առաջարկեց , ավագանու նիստին ներկայացնել յուրաքանչյուր շենքի տանիքի հետ կապված աշխատանքների փաթեթը՝ վերանորոգման աշխատանքներն ավելի թափանցիկ և արդյունավետ կազմակերպելու համար: Առաջարկն ընդունվեց միաձայն:

Ա.Բաբայանը անդրադարձավ քաղաքում տեղադրված տեսանկարահանող սարքերի մասնագիտական սպասարկման հարցին:Վերջինս չի սպասարկվում ոստիկանության կողմից , ուստի անհրաժեշտություն է առաջացել խնդիրը լուծել համայնքի միջոցով:Նախատեսվել է համայնքի բյուջեից մինչև 2023թ. ավարտը 1000000 ՀՀ դրամ գումար հատկացնել տեսանկարահանող սարքերի մասնագիտական սպասարկմանը:

Արթուր Գալստյանի այն հարցին , թե մինչ այդ ով է իրականացրել տեսախցիկների մասնագիտական սպասարկումը , համայնքապետարանի աուդիտի բաժնի պետ Սերգեյ Հովհաննիսյանը պատասխանեց,որ շուրջ 3 տարի է ինքն է սպասարկում անվճար ,առանց վարձատրման՝ հավելելով ,որ այլևս չի պատրաստվում շարունակել սպասարկումը :

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նաև Չարենցավան համայնքի Արզական գյուղի ոռոգման ջրի բարելավման համար ձեռք բերվելիք խողովակների համար նախատեսված ծախսերը և Կարենիս գյուղի նոր լուսավորության համակարգի կառուցման հարցը:

Արթուր Գալստյանը նշեց ,որ Արզական գյուղի ոռոգման ջրի հարցը հրատապ է և անհրաժեշտ է ձեռնարկել արագ և արդյունավետ միջոցներ՝ խնդրի հրատապ լուծման համար:

Հանձնաժողովի անդամները ողջունեցին Կարենիս գյուղի լուսավորության հետ կապված աշխատանքները:

Լսեցին՝

2.Գ.Աֆյանը ներկայացրեց Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի ,Բջնի և Ֆանտան գյուղերի բնակիչների դիմումները՝ ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին դիմումները :

Հանձնաժողովի անդամները միաձայն տվեցին իրենց համաձայնությունը:

Նիստի ավարտին ՔՊ խմբակցության ավագանու անդամ Ն.Վարդանյանը ընթերցեց ՔՊ խմբակցության փորձագետ Ս.Սահակյանի կարծիքը (կարծիքը կցվում է արձանագրությանը):

1. **Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 79-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:**

Չարենցավան քաղաքի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգման աշխատանքների համար հանձնաժողովի անդամները քվեարկեցին՝

Կողմ- 3 **դեմ-0** **ձեռնպահ-3**

1.Նորայր Վարդանյան
2.Արայիկ Բաբայան
4.Մնացական Պողոսյան

1.Արթուր Գալստյան
2.Նորիկ Վարդանյան
3.Անահիտ Խեչոյան

1. **Տեսանկարահանող սարքերի մասնագիտական սպասարկման համար հանձնաժողովի անդամները քվեարկեցին՝**

Կողմ- 1 **դեմ-0** **ձեռնպահ-4**

1.Արայիկ Բաբայան

1.Նորայր Վարդանյան
2.Մնացական Պողոսյան
3.Արթուր Գալստյան
4.Նորիկ Վարդանյան

Արզական գյուղի ոռոգման ցանցի բարելավման , Կարենիս գյուղի փողոցների լուսավորության համակարգի կառուցման համար հանձնաժողովի անդամները քվեարկեցին՝

Կողմ- 5 դեմ-0 ձեռնպահ-0

1.Արայիկ Բաբայան
2.Նորայր Վարդանյան
3.Մնացական Պողոսյան
4.Արթուր Գալստյան
5.Նորիկ Վարդանյան

2.Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) գումար հատվածից հատկացնելու մասին:

Կողմ- 5 դեմ-0 ձեռնպահ-0

1.Արայիկ Բաբայան
2.Նորայր Վարդանյան
3.Մնացական Պողոսյան
4.Արթուր Գալստյան
5.Նորիկ Վարդանյան

Նախագահ՝ Արայիկ Բաբայան

Քարտուղար՝ Մնացական Պողոսյան

27.06.2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ք. Չարենցավան **27.06.2023 թ.**

Չարենցավան համայնքի ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը 2023 թվականի հունիսի 28-ին կայանալիք ավագանու հերթական նիստին ներկայացվող նորքոնշյալ որոշման նախագծի քննարկմանը տվեց դրական եզրակացություն:

Նախագահ՝ **Արայիկ Բաբայան**

Քարտուղար՝ **Մնացական Պողոսյան**

Անդամներ՝

Նորայր Վարդանյան

Արթուր Գալստյան

Նորիկ Վարդանյան

Անահիտ Խեչոյան

27.06.2023թ.